ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 34. ԿԱՌԼՈՍ ՄԵԾԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Հատվածներ «Սալիական դատաստանագրքից»

1 Եթե մեկը գողանա 1 տարեկան խոզ և բռնվի հանցանքում, կդատապարտվի վճարելու 3 սոլիդ (սոլիդ–հռոմեական դրամ): Եթե մեկը գողանա եզ կամ կով՝ հորթի հետ, կդատապարտվի վճարելու 35 սոլիդ: Եթե մեկը գողանա թագավորի եզը, կդատապարտվի վճարելու 90 սոլիդ, չհաշված գողացածի արժեքը: Եթե մեկը հրդեհի որևէ տուն՝ օժանդակ շինությունների հետ, կդատապարտվի վճարելու 63 սոլիդ: Եթե մեկը հրդեհի հացով լի ամբար, կդատապարտվի վճարելու 63 սոլիդ: Եթե մեկը գողության նպատակով մտնի ուրիշի այգին, կդատապարտվի վճարելու 15 սոլիդ: Եթե մեկը գողանա ստրուկ, ձի կամ լծկան անասուն, կդատապարտվի վճարելու 30 սոլիդ: Եթե մեկը կյանքից զրկի ազատ ֆրանկին և մերկացվի հանցանքում, կդատապարտվի վճարելու 200 սոլիդ: Եթե մեկը կյանքից զրկի թագավորական ծառայության մեջ գտնվող մարդուն, կդատապարտվի վճարելու 600 սոլիդ:

Հոն ռազմիկ

2

Կառլոսն ավելի քան 30 տարի պատերազմեց սաքսերի գերմանական ցեղերի դեմ: Ֆրանկներին մի քանի անգամ հաջողվեց պարտության մատնել սաքսերին: Սակայն հենց որ ֆրանկական զորքերը հեռանում էին, սաքսերն ապստամբում էին: Սաքսերի դիմադրությունն ընկճելու համար Կառլոսը հրապարակում էր դաժան օրենքներ, ուժով հարկադրում ընդունել քրիստոնեական կրոնը: Թագավորին չհնազանդվելու, քրիստոնեական հավատն ուրանալու դեպքում մահապատիժ էր սպառնում: Սակայն այսպիսի դաժան միջոցներն էլ չօգնեցին: Այնժամ Կառլոս Մեծը կալվածքներ նվիրեց և իր կողմը գրավեց սաքսոնական ավագանուն: Ավագանու աջակցությամբ Կառլոս Մեծին հաջողվեց սաքսերին իրեն ենթարկել:

3

Կառլոս Մեծի մասին հյուսվեցին առասպելներ, փառաբանվում էին նրա իմաստությունը և սխրանքները: Նրա կերպարը մնաց սերունդների հիշողության մեջ, իսկ նրա անունը սլավոնական ցեղերի շրջանում վերածվեց արքայական տիտղոսի՝ «король, kral» ձևով: